



ԵՂԻՎԱՐԴ

Հ Ո Ղ Հ Ա Յ Ր Ե Ն Ի

Հո՛ղ հայրենի,
Համակ տարփանք ու տրամություն,
Սուրբ հեղանւթն
Իմ պապերուս երազներուն
Ու խորհուրդին,
Մարմին դարձած պատկերին մեջ
Հայրենիքին:

Հո՛ղ հայրենի,
Անհուն կարոտ, կապույտ երազ
Ու կարմիր ձայն,
Գեղեցկություն անշամանդալ,
Երեկ, այսօր ու հավիտյան:

Քանի՛ դար է, ա՛յ չեմ հիշեր,
Մեր արեւին նման այրող,
Մեր ջուրերուն պիս պաղպաջուն,
Երազն էր խոր
Ժողովուրդին մեր դարավոր,
Ունենալ լոկ իր սեփական
Կտոր մը հող:

Ունի՛նք այսօր,
Այդ բաբախում բարիքն հրգոր,
Ավերակեն մեր հայրենի,
Որուն ծոցին կծոցվորին
Անա նորեն,
Արիւնեն վերջ,
Միտքի, սիրտի ծիւրն աղվոր
Որուն սիրտեն կայգւորին
Մարած ջահերն հոգիներուն,
Ողողելու խորշերն ամեն
Մեր գիտության խոր նկուղին,
Եվ ընելու զմեզ գիտակ
Իրավունքին մեր դարավոր:

Հո՛ղ հայրենի,
Նա՛վն Սփյուռքին,
Ալիքներուն վերե պղտոր
Ժամանակին՝
Առանց բեզբ
Կողողողայ անապական՝
Խղված կայքն իր ամրակոտ:

Ու կհիշեմ դրվագն աղվոր
Առասպելին—
Մենամարտը աստվածներուն
Հովին, հողին:
Ու համաձայն խորհրդանիշ
Այդ զրույցին,
Երբ զատվեին ոտքերն հողեն
Երկրի տիրոջ,
Մենամարտին մեջ կատաղի՝
Կնվաղեր ան իր ույծեն,
Արմատախիլ բոյս մը ինչպես
Հովի բերին:
Բայց երբ հողին մոտենային
Ոտվըներն իր,
Ան կմնար անպարտելի:

Նույնօրինակ՝ հեփիաթն անույշ
Հայ արքային, երբեմն պանդուխտ.
Որ կոխելն վերջ հայ հողին,
Կզրահվեր ուժովն անհուն
Նախնիներուն փառամարտիկ:

Օրերուն հետ նախ բնն րած.
Հետո հաշտված,
Հոգնած սիրտով ես կհայեմ,
Ակոսներովս ամուր բռնած
Հայու հոգին,
Յողված արյան կոհակներով.
Եվ զոր այսօր կուգեն գնել
Մարդիկ անխիղն ու վատշվեր.
Փոր մը հացով:

Անցյալն լոկ ափսոսանքներ
Կուգան խոռվել
Հոգիս՝ լեցուն հազար վերով:
Հույսը կանցնի անարձագանք՝
Ապագայի մը դեմ ստեղծ,
Առանց երբեք սուտելու
Ճակտիս մայլն,
Օրերուն դեմ նսեմաստվեր,
Մինչև որ գա հուսկ իրիկուն,
Երկրեն հեռու
Աչքս փակել:

Տարիներու ցեցն է կերեր
Ասվին ընտիր երազներուս.
Եվ օրերու ավագին մեջ
Կիյնան անձայն
Փշրաններ սուրբ,
Ջորս մեր հոգին գիտե պանել,
Երբեմն նույնիսկ իրմե գաղտնի:

Մաղիկներով պսակագարդ՝
Եկան, անցան գարուններ շատ.
Առանց երբեք կարենալու
Սիրտս բովել—

Մեռելատիպ, ախարական—
Լված օտար աստղերուն տակ:

Խոր բեկումով ինձ կտրվի
Երբեմն զգալ,
Թե օտար եմ, անտուն, անտեր.
Երկինքին տակ ուր դեռ կապրիմ,
Ու կը բացվի թեյն հուշերուն
Աստեղագեղ,
Երկրին՝ որուն գավակն եմ ես.
Որուն սիրով հագաբերանգ
Վարդենիներ կրանան թե
Երազներուս արևին տակ:

Հո՛ղ հայրենի,
Ուր կհանգչի ոսկերատին
Ազատատենը Հայկին հզոր,
Տիգրաններուն աշխարհակալ.
Որուն սիրտեն կրգանան
Ինչպես երեկ, նույնպես այսօր.
Կախարդագեղ ու հույաշեն,
Հազար կառույց, վանք ու պալատ,
Աշտանակի՛ն որոնց հրաշք
Դեռ կվառի կապույտ բոցով
Մեր սուրբերուն, հերոսներուն,
Հոգին անմար:

Սե՛ր հայրենի,
Խառն՝յկ անմեռ՝
Մեր հոգիին ու դարերու
Մութին դիմաց.
Գերեզման սուրբ սերունդներու,
Հողը որուն՝
Մեր արյունովն է շաղախված,
Խունկի մը պես նվիրական:

Հո՛ղ հայրենի,
Անհուն մուրհակ
Իրավունքին մեր դարավոր,
Որուն համար
Հազար մահով ենք մենք մեռեր,
Մնալով միշտ սակայն անմեռ՝

Թողունին պես հեփաթային՝
Ժամանակին ավերին դեմ,
Բու սիրույդ մեջ
Վերածնելով հավերժաբար:

Սե՛ր հայրենի,
Մեր արյունին ու մարմինին
Բշիջներուն խորը նստած.
Սե՛ր հավերժող, զոր դեռ երեկ՝
Խեղդել իզո՛ւր ժպրհեցան
Իծածնունդ մարդակերպեր,
Արիւնին մեջ բոլոր անոնց,
Որոնք ինկան անապատի ավազներուն՝
Անգերեզման,
Բայց որոնց մեջ տեսիլդ անույշ,
Հզոր էր քան
Մովը լույսին արևներուն:

Բռնակա՛լ սե՛ր՝
Մյուս բոլոր սերերեն վեր,
Որուն ջերմիկ ծոցերուն մեջ
Միայն կրնան հանգստանալ
Ցավեն սեցած ու հոգնաբեկ
Մեր ոսկորներն:
Սե՛րը հողին,
Ուր կայքն բլլար ա՛լ վերջնական՝
Թափառումին մեր դարավոր,
Հագեցրենք մեր քաղցն անհագ՝
Սեղաններուն բովիկն օտար:

Առանց քեզի,
Հո՛ղ հայրենի,
Դիակ մըն է մարմինը մեր,
Եվ բլուր մը, մեծ գերեզման՝
Կյանքը— ոստա՛յն անեծքներու,
Օտարության այս ափերուն.
Եվ ապրումի կաթիլը սև,
Երակներեն մեր ելեէջ,
Մեր ուրացման դեմ կգուծե
Մահեր հազար ու կորաբներ,
Մինչև երեկ հայու ճակտին
դեռ անվայել:

Հայրենի՛ սե՛ր,
Ժամանակեն անհերքելի
Ու չհինցող մեծ զգացում.
Աստվածները կրնան մեռնիլ,
Ու կրոններն հիննալ, մաշիլ,
Հանդերձներու պես ցեցակեր,
Ժամանակի հոսումին դեմ,
Դուն կմնաս մշտապայծառ,
Մեր ինքնության
Սուրբ կնիքովն ազնվական:

(Բեյրութ, «ԱՆԻ» ամսագիր, 1952 թ., № 8)

